«ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի
(ՀՎՀՀ 07623477) տնօրեն
Վ. Հայրապետյանին
հասցե՝ Տավուշի մարզ, Այրում համայնք,
Գ.Հաղթանակ, 1-ին փ. 2-րդ նրբ. 3-րդ շենք
էլ. հասցե՝ martin19634@mail.ru

«Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի միջև 19.02.2021թ. կնքված N **ՀՀԱՄ-ԱՐԱԳԱԾԱՎԱՆ-ԹԻՎ-2-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -21/01** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 08.04.2021թ.-ին Պայմանագրին կից կնքված համաձայնագրի (այսուհետ՝ Հանաձայնագիր) համաձայն՝ Համաձայնագրի կնքման օրվանից 75 օրացուցային օրվա ընթացքում «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից չեն իրականացվել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ <<Ինքնահարթեցվող շերտի իրականացում>> և <<Հատակի իրականացում վինիլ տեսակի ծածկույթով t=4մմ հաստությամբ, սոսնձի հետ միասին>> աշխատանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ «Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը **13.08.2021թ.** դրությամբ միակողմանի՝ Պայմանագրի և Համաձայնագրի չկատարված աշխատանքների մասով, մասնակի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900468000246** հաշվեհամարին փոխանցել՝

- **126109 (մեկ հարյուր քսանվեց հազար հարյուր ինը) ՀՀ դրամը** որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն,
- **26517 (քսանվեց հազար հինգ հարյուր տասնյոթ)** ՀՀ դրամը որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն,
- ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900468000246** հաշվեհամարին ենթակա է գանձման **260018 (երկու հարյուր վաթսուն հազար տասնութ)** ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում,
- **390027 (երեք հարյուր իննսուն հազար քսանյոթ)** ՀՀ դրամը որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

«Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Ցեր-Մարտիրոսյան